ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Նիստի անցկացման օրը, ժամը
11.10.2023թ. ժամը՝ 16:30

Նիստի անցկացման վայր՝
Էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Խորհրդի անդամներ

1.	Հրաչյա Զաքոյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
2.	Լիլիթ Զաքարյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
3.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
4.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
5.	Էլինա Մարգարյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
6.	Լուսինե Մնացականյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
7.	Սարգիս Ասատրյանց	«Հայաստանի ազգային-պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
8.	Հակոբ Ավագյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

9.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
10.	Նիկա Մանուկովա	«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային ասոցիացիա
11.	Ռուբեն Հայրապետյան	«Մատենա» միջազգային դպրոց
12.	Տիգրան Մնացականյան	«Մատենա» միջազգային դպրոց
13.	Նարեկ Ասլիկյանն	Armenian Code Academy
14.	Անահիտ Սարգսյան	Armenian Code Academy

Հրավիրված անձինք

15.	Լուսինե Սարգսյան	Բրիտանական դեսպանատուն Երևանում
16	Արամ Վարդանյան	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
17	Արմեն Դանիելյան	Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
18.	Ժորա Սարգսյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
19.	Մարգարիտա Զալիբեկյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ

20	Անի Մովսիսյան	Ֆինանսների նախարարություն
21	Արմեն Եգանյան	Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերական քաղաքականության վարչության պետ

Քարտուղարության անդամներ

22	Հռիփսիմե Հովհաննիսյան	Ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ
23	Փառքուհի Ղազարյան	Ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի գլխավոր մասնագետ
24	Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
25	Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
26	Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
27	Ռուբեն Սարուխանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ
28	Վիկտորիա Կամարյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող
29	Հասմիկ Տոնապետյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի հանրային կապերի պատասխանատու

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Հարց 1. Կրթական ծրագրերի իրականացման համար սահմանված որոշ տեխնիկական պահանջների վերանայում (այդ թվում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց մասնագիտական կրթության և վերապատրաստման հնարավորությունների ընդլայնման

տեսանկյունից) («ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն և 2001 թվականի հունվարի 16-ի N 24 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ):

Հարց 2. Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային հարթակի ներդրման նախաձեռնություն («Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ)

Հարց 3. Համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագրի չհրապարակման, հարկային հաշվարկների ճշգրտման սահմանափակումների, հարկային պարտավորությունների առաջադրման ժամկետների նախագծի վերաբերյալ (*04.10.2023 թ. նիստում հետաձգված հարց*):

Հարց 4. ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների գործունեությանն առնչվող խնդիրներ (ԱՏԳ շահագործողների ռեեստրում ներառվելու ընթացակարգի և այլ հիմնախնդիրների քննարկում):

ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նիստը նախագահում էր Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը ներկայացրեց օրակարգային հարցերը՝ նշելով, որ դրանք չորսն են: Միաժամանակ պարոն Պատվականյանը նշեց, որ նիստին բացակայում է Պետական եկամուտների (ՊԵԿ) ներկայացուցիչը, իսկ օրակարգի 3-րդ՝ համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագրի չհրապարակման, հարկային հաշվարկների ճշգրտման սահմանափակումների, հարկային պարտավորությունների առաջադրման ժամկետների հետ կապված հարցը վերաբերում է ՊԵԿ նախաձեռնությանը, և քանի որ առանց վերջիններիս մասնակցության հարցի քննարկումը արդյունավետ չի լինի, նիստի մասնակիցներին առաջարկեց հարցն առանձին քննարկել առանձին ՊԵԿ-ի հետ, որն և միաձայն ընդունվեց: Պարոն Պատվականյանը օրակարգային հարցերի ներկայացումից հետո, տեղեկացրեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախորդ նիստում արձանագրվել էր, որ հետայսու, մինչև խնդիրների կարգավորումը,

ենթախորհրդի նիստերի վերջում Էկոնոմիկայի նախարարությունը ներկայացնելու է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց, բիզնեսների կարիքների և աջակցության ծրագրերի կապված խնդիրների քարտեզագրմանն ու լուծման աշխատանքները, վերջում անդրադարձ կկատարվի վերջիններիս:

Զեկուցման ավարտին պարոն Գևորգյանը՝ «Armenian Code Academy» կազմակերպության տնօրեն «Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միություն (ԱՏՁՄ) հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Նարեկ Ասլիկյանին առաջարկելով զեկուցել 1-ին հարցը:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 1. Կրթական ծրագրերի իրականացման համար սահմանված որոշ տեխնիկական պահանջների վերանայում (այդ թվում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց մասնագիտական կրթության և վերապատրաստման հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից) («ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն և 2001 թվականի հունվարի 16-ի N 24 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ):

Հարցը զեկուցեց «Armenian Code Academy» կազմակերպության տնօրեն Նարեկ Ասլիկյանը: Համաձայն վերջինիս, կազմակերպությունը գործում է 2015 թվականից և տարեկան վերապատրաստում է 2000-ից 4000 մասնագետ տեխնոլոգիական ոլորտի համար: Յուրաքանչյուր տարի կազմակերպությունն ունենում է մոտ 15 հազարից մինչև 20 հազար դիմորդ, այսինքն՝ ավելի շատ, քան բոլոր կրթական հաստատությունները միասին: Պարոն Ասլիկյանի պնդմամբ, նշվածը նշանակում է, որ աշխատաշուկան և կրթական ոլորտը կարիք ունի ավելի ճկուն մոտեցումների և գործիքների կիրառման: Ի շնորհիվ արտերկրյա մասնագետների մոտ նոր հինգ մասնագիտություն է ներդրվել Հայաստանում: Խնդիրը կայանում է նրանում, որ «Armenian Code Academy» -ն ոչ ֆորմալ կրթական հաստատություն է, ինչպես և մի շարք նմանատիպ կազմակերպությունները, որոնց հետ առկա է համագործակցություն, և չունի այնպիսի մրցակցային առավելություններ, ինչպիսիք ունեն լիցենզավորված կրթական հաստատությունները: Այդ հանգամանքի դիտարկմամբ, «Armenian

Code Academy»-ն նախատեսում է դառնալ ֆորմալ, այսինքն՝ լիցենզավորված կրթական հաստատություն:

Կազմակերպությունը ունի սահմանած նպատակ, յուրաքանչյուր տարի մեկ նոր մասնագիտության համապատասխան լիցենզավորված կրթական հաստատություն ունենալ, ինչը թույլ կտա ճանաչված կրթական ավարտական փաստաթղթեր տրամադրել և ընդլայնել ուսանողների կրթական հնարավորությունները, իսկ աշխատաշուկային՝ ունենալ պահանջված գիտելիքներ տիրապետող մասնագետներ:

Առաջարկվող լուծումների մասով պարզաբանումներ ներկայացրեց ՎԶԵԲ Ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը՝ ներկայացնելով, որ խնդիրը նախնական փուլում քարտեզագրվել էր ԱՏՁՄ-ի կողմից, այնուհետև այն քննարկվել է նաև ոլորտում գործող մի շարք ոչ ֆորմալ կրթական հաստատությունների հետ: Այսպես օրինակ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, ինչպես նաև մագիստրոսական ծրագիր իրականացնող կրթական հաստատությունների լիցենզավորման համար անհրաժեշտ է, որպեսզի դասախոսական կազմի և արտադրական ուսուցման վարպետների 50%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանա հիմնական աշխատավայր: Համաձայն պարոն Պատվականյանի՝ խնդիրն արհեստածին է, իսկ «հիմնական աշխատավայր» հասկացությունը չհստակեցված: Նշվածի մասով դիտարկումներ ներկայացրեցին նաև նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը, ԱՍՀՆ-ն ներկայացուցիչ Ժորա Սարգսյանը և ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանը:

Պարոն Պատվականյանը ներկայացրեց քարտեզագրված՝ ոլորտային մի քանի խնդիր ևս, մասնավորապես.

- Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման համար նախատեսված է, որ ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 60 տոկոսը պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան (կամ), կոչում, այդ թվում՝ յուրաքանչյուր մասնագիտության մասնագիտական առարկաների գծով՝ 3-ը, իսկ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների դեպքում պետք է ունենա պետական լիազորված մարմնի

կողմից ճանաչված գիտական աստիճան (կամ), կոչում (կամ), բնագավառին հատուկ պետական կոչումներ (կամ), պարգևներ (կամ), գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ և այլն.

- օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝

1) տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նախարարության կողմից յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ատեստավորված, օտար լեզվով դասավանդելու երաշխավորություն ստացած կամ միջազգայնորեն ընդունված լեզվի իմացության մասին փաստաթուղթ ներկայացրած մասնագետներով.

2) կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ՝ օտար լեզվով դասավանդող մասնագետների համար:

- անհրաժեշտ է ապահովել զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, ամբիոնների, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիայի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին.

- Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները նախատեսում են, որ «Մագիստրոս» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիրն ընդգրկում է «բակալավր» որակավորմամբ մասնագետի առնվազն 2 տարվա խորացված ուսուցում՝ ներառյալ շրջանավարտների գիտահետազոտական կամ գիտամանկավարժական գործունեության պրակտիկան:

Տվյալ պահանջների հետևանքով այն կրթական հաստատությունները, որոնք ներգրավում են տարբեր ոլորտների բարձրակարգ և անվանի մասնագետների, ովքեր՝ պատրաստ են իրենց փորձը և գիտելիքները երիտասարդներին փոխանցել: Սակայն վերոգրյալ պահանջների պատճառով վերջիններս չեն բավարարում լիցենզավորման չափանիշներին, քանի որ այդ մասնագետներն ունեն այլ աշխատանք և կրթությունը կարող է չդիտարկվել որպես հիմնական: Փաստ է սակայն, որ հատկապես տեխնոլոգիական ոլորտում առավել արդիական գիտելիքներ ունեն այն դասախոսները, որոնք աշխատում են իրենց մասնագիտությամբ և տիրապետում են միջազգային մասշտաբով տեսական ու գործնական վերջին նորություններին:

Նշված խնդիրներին ավելացել է նաև արցախահայերին աշխատանքի տեղավորման անհրաժեշտությունը, որին էապես կարող է նպաստել որակյալ կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնումը՝ այդպիսով ստեղծելով մրցունակ աշխատուժի առաջարկ:

Պարոն Պատվականյանը, ի հավելում վերոգրյալի, ներկայացրեց նաև առաջարկվող լուծումները, մասնավորապես հաշվի առնելով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, ինչպես նաև մագիստրոսական ծրագիր իրականացնող կրթական հաստատությունների գործունեությանն առնչվող վերը թվարկված խնդիրները՝ առաջարկվում է՝

- Վերացնել կրթական հաստատության դասախոսական կազմի և արտադրական ուսուցման վարպետների 50%-ի համար տվյալ ուսումնական հաստատության հիմնական աշխատավայր հանդիսանալու պահանջը.
- Մագիստրոսի կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների գիտական աստիճան ունենալու նվազագույն սահմանաչափը 60%-ից իջեցնել 20%-ի:
- Օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ոչ պետական ուսումնական հաստատությունների համար վերացնել դասախոսների՝ օտար լեզվի իմացության հավաստման և վերապատրաստման պահանջները.
- Ոչ պետական ուսումնական հաստատությունների համար վերացնել ուսումնական տարածքների՝ ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխանելու որոշ պահանջները.
- «Մագիստրոս» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագրի 2 տարվա խորացված ուսուցման փոխարեն սահմանել 1 տարի:

Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը հարցի կապակցությամբ տեղեկացրեց, որ հարցը կքննարկվի ԿԳՄՍ նախարարության հետ: Պարոն Գևորգյանը հայտնեց դիրքորոշում առ այն, որ փոքր կազմակերպությունները, որոնք ուզում են իրականացնել կրթական ծրագրեր, պետք է ունենան այդ հնարավորությունները՝ որևէ կերպ չխախտելով որակի չափանիշների համար սահմանված պահանջները: Պարոն Գևորգյանը մատնանշեց, որ այստեղ շեշտը պետք

է դրվի որակյալ կրթություն մատուցելու վրա, ոչ թե ֆիզիկական ենթակառուցվածքների պահանջի վրա:

Համաձայն Պոլիտեխնիկական համալսարանի պրոռեկտորի Սարգիս Ասատրյանցի, համալսարանը դրական կարծիք ունենալով առաջարկվող որոշ դրույթների վերաբերյալ, սկզբունքային առարկություն ունի հատկապես բնագիտական և ինժեներական մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացման մասով դրույթի հետ կապված: Մասնավորապես առաջարկվում է սահմանված՝ պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 60 տոկոս շեմը թողնել անփոփոխ, քանի որ համալսարանի փորձը ցույց է տալիս, որ նշված ծրագրերի դեպքում գերակշիռ է հետազոտական բաղադրիչը, իսկ այն մասնագետները ովքեր չունեն գիտական աստիճան, այսինքն՝ գիտահետազոտական աշխատանքով չեն զբաղվել, կդժվարանան բնագիտական և ինժեներական հոսքերում դասավանդել և համաձայն պարոն Ասատրյանցի, նշվածը տարիների ընթացքում բացասաբար կանդրադառնա կրթության որակի վրա:

Ներկայացվածի վերաբերյալ առարկություններ ներկայացրեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոռեկտոր Հրաչյա Զաքոյանը՝ նշելով, որ համալսարանի հետ համագործակցող ագրարային ոլորտի շատ օտարերկրյա կոլեգաներ ունեն մեծ պրակտիկ փորձ, լավագույն համալսարանների շրջանավարտ լինելով չունեն գիտական աստիճան և դա Հայաստանում համարժեք մասնագետ չունենալու պայմաններում, ինչը նշանակում է, որ համալսարանը արդիական մի շարք մասնագիտություններ չի կարող ներդնել Հայաստանում: Պարոն Զաքոյանը դրական համարեց ոլորտի ազատականացման ուղղված փաթեթը՝ կարծրատիպային մոտեցումներից ազատվելու և կրթական համակարգը առավել ճկուն դարձնելու տեսանկյունից: Քննարկումներ ծավալվեցին նաև «հիմնական աշխատավայր» հանդիսանալու պահանջի շուրջ: Պարոն Գևորգյանը առաջարկեց ԱՍՀՆ-ն ներկայացուցիչ Ժորա Սարգսյանին՝ քննարկել հասկացության հետ կապված ԱՍՀՆ-ի կողմից պաշտոնական պարզաբանում ներկայացնելու հնարավորության հարցը:

ՈՐՈՇՎԵՑ

Քննարկումների արդյունքներով, պարոն Գևորգյանի առաջարկմամբ, որոշվեց նախագծային դրույթները քննարկել ԿԳՄՍ նախարարության հետ՝ խորհրդի շրջանակում ձևավորված առաջարկությունների դիտարկմամբ:

Հարց 2. Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային հարթակի ներդրման նախաձեռնություն («Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ):

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ներկայացուցիչ Արամ Խաչատրյանը՝ ՎՋԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանի համազեկուցմամբ ներկայացրեցին հարցը: Մասնավորապես ներկայացվեց, որ նախագծով առաջարկվում է ներդնել աշխատանքային պայմանագրերի կնքման թվային հարթակ, որի միջոցով հնարավորություն կստեղծվի ՊԵԿ և Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի համար իրականացնել վերահսկողությունը, թվային հարթակից օգտվելու իրավասություն ունեցող անձանց հնարավորություն կընձեռվի թվային եղանակով՝ համաժամանակյա ռեժիմով, ցանկացած պահի հասանելի դարձնել կնքված աշխատանքային պայմանագրերը՝ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:

Համաձայն զեկուցման, նախագծի վերաբերյալ ի սկզբանե ձևավորվել է բացասական կարծիք, քանի որ առկա են մի շարք մտահոգություններ՝ թե իրավական, և թե տնտեսավարողների վրա լրացուցիչ վարչական բեռի առաջացման տեսանկյունից: Պարոն Խաչատրյանը մասնավորեցրեց, որ կարգավորումների մասով ուսումնասիրել է միջազգային փորձը՝ նմանատիպ կագավորման հետ կապված տեղեկատվություն ստանալու նպատակով: Համաձայն վերջինիս, նման կարգավորում առկա է շատ սահմանափակ թվով երկրներում, ընդ որում դրանք հիմնականում արաբական երկրներ են՝ ԱՄԷ, Կատար և այլն: Պարոն Խաչատրյանը նաև տեղեկացրեց, որ նախագծի շուրջ նախկինում տեղի ունեցած քննարկումների ժամանակ ԱՍՀՆ-ն արդեն իսկ ներկայացրել է պարզաբանումներ առկա մտահոգությունների մասով, որոնք սակայն համաձայն վերջինիս՝ համոզիչ չեն:

Պարոն Մալխասյանը, ի հավելում ներկայացրեց, որ նախագծով առաջարկվում է ստեղծել միասնական հարթակ, և միայն այդ հարթակի միջոցով կարող են կնքվել աշխատանքային

պայմանագրերը և միայն էլեկտրոնային ստորագրությամբ: Նախատեսվում է նաև, որ հարթակը պետք է լինի ՊԵԿ ներքո և ՊԵԿը պետք է ստանա հարթակին ամբողջական հասանելիություն: Սակայն վերջինիս համաձայն իր կարծիքի, ՊԵԿ-ն իր մասով անհրաժեշտ տվյալների բազային արդեն իսկ հասանելիություն ունի, և նման ձևաչափով հասանելիության անհրաժեշտությունը բացակայում է: Միաժամանակ, նախագծով տեսչական մարմնին ևս հարթակին մշտական հասանելիություն է նախատեսվում տրամադրել, առանց հաշվի առնելու, որ հարթակում տեղադրված տեղեկատվությունը մի քանի տեսակ գաղտնիք պարունակող բնույթի կարող է լինել՝ անձնական, բիզնես և այլն:

Առարկությունների հետ կապված որոշակի պարզաբանումներ ներկայացրեցին Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Արմեն Դանիելյանը և ԱՍՀՆ-ն աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը: Մասնավորապես վերջիններս նշեցին, որ հարթակի ստեղծումը ոլորտում նախաձեռնված բարեփոխումների բաղադրիչ է: Բացի այդ, ինչ վերաբերում է այդ մարմինների՝ հարթակին հասանելիության հարցին, ապա տվյալների հասանելիությունը չի նշանակում ամբողջ բազայի տիրապետում, այլ ըստ ստուգման դեպքերի:

Պարոն Գևորգյանը ներկայացրեց որոշակի մանրամասներ՝ Կառավարությունում հարցի նախնական քննարկման հետ կապված: Մասնավորապես, պարոն Գևորգյանը տեղեկացրեց, որ Էկոնոմիկայի նախարարությունն է հենց ի սկզբանե առարկել, որ Տեսչական մարմինը մշտական հասանելիություն ունենա տվյալների բազային, այլ ունենա միայն յուրաքանչյուր ստուգման հիմքերի առկայության դեպքում: Եվ հենց այս խնդրի դիտարկմամբ Էկոնոմիկայի նախարարությունն է առաջարկել հարթակը ՊԵԿ ներքո գործարկել, քանի որ ՊԵԿ-ն արդեն իսկ տիրապետում է գործատուի կողմից ներկայացված որոշակի տեղեկատվության, առաջարկվել է ընդլայնել մուտքագրվող տեղեկատվության դաշտը այն մասով, որը Աշխատանքային օրենսգրքով պարտադիր է: Դա չի ենթադրում ՊԵԿ-ում առանձին հարթակ ստեղծելը: Պարոն Գևորգյանը հավելեց, որ նիստի ընթացքում առաջարկել է նաև, որ սահմանվի միայն էլեկտրոնային ստորագրության և պայմանագրի ակտիվացման պարտադիր պահանջ և այսքանով սահմանափակվի կարգավորումների մասը, առանց հարթակի ստեղծման:

Հարցի վերաբերյալ իրենց կարծիքները հայտնեցին նաև «ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի»-ից Հակոբ Ավագյանը և «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ-ից Լուսինե Մնացականյանը: Մասնավորապես պարոն Ավագյանի տեղեկացմամբ, նախնականորեն հարթակի ստեղծման գաղափարը ենթադրում էի ստեղծել հնարավորություն կանխարգելել աշխատողների իրավունքի պաշտպանության հետ կապված խնդիրները և այդ նպատակով տեսչական մարմնի գործառույթների արդյունավետ իրականացման համար ներդնել համապատասխան գործիքակազմ: Ինչ վերաբերվում է Լուսինե Մնացականյանին, վերջինս կարևորեց տնտեսավարողների, հատկապես ՓՄՁ սուբյեկտների համար նախագծի ընդունման դեպքում առաջ եկող վարչական/ֆինանսական բեռի, աշխատողների և գործատուների անձնական տվյալների և գաղտնիք կազմող այլ տվյալների պաշտպանության խնդիրների հետ, քանի որ նախագծի ընդունմամբ տեսչական մարմինը հնարավորություն կստանա տնօրինել տվյալների շտեմարանը՝ բարձր ռիսկայնության աստիճան ունեցող գործատուներին բացահայտելու և ստուգումներ իրականացնելու հիմնավորմամբ: Բացի այդ, համաձայն վերջինիս, նախագծի կարգավորման չի պարունակում պետության և վարչարարության հետաքրքրություններից դուրսն է և խախտում է աշխատանքային իրավահարաբերությունների ազատության սկզբունքը:

Քննարկմանը արձագանքեց նաև Պատվականյանը՝ տեղեկացնելով, որ խորհրդի շրջանակում ձևավորված բացասական դիրքորոշումը հիմնված է խոր և բազմակողմանի վերլուծությունների վրա և չնայած այն հանգամանքի, որ ԱՍՀՆ տեղեկատվության համաձայն նախագծի մշակումը պայմանավորված է ՀՀ կառավարության ստանձնած պարտավորություններով և ենթակա է պարտադիր իրականացման, Խորհրդի անդամների ձայների մեկ երրորդով այն կարող է ընդգրկվել Փոխվարչապետին կից ՓՄՁ զարգացման խորհրդի նիստի օրակարգում և դառնալ խորհրդի առաջիկա նիստի քննարկման հարց: Պարոն Պատվականյանը առաջարկեց արձանագրել, որ նախագծով ամրագրվածը սկզբունքորեն տարբեր է Էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկվող մոտեցման հետ և նախագծի լրամշակված տարբերակը չի պարունակում նախարարության կողմից ներկայացված հիմնական նախագծային առաջարկները:

ՈՐՈՇՎԵՑ

Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնմամբ՝ ՎՋԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի մասնակցությամբ հանդիպում կազմակերպել ԱՍՀՆ ոլորտը համակարգող փոխնախարար Ռուբեն Սարգսյանին մոտ և քննարկել նախագծի հետ կապված Խորհրդի շրջանակում ձևավորված առարկություններն ու առաջարկությունները, որից հետո նոր կանխորոշել հետագա գործողությունները, այդ թվում նաև Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի ներքո գործող ՓՄՁ զարգացման խորհրդի առաջիկա նիստի օրակարգ ընդգրկելու հարցը:

Արձանագրության ներկայացման պահին ամրագրվել էր ԱՍՀՆ-ում հարցի քննարկման օրն ու ժամը՝ 18.10.2023 թ.:

Հարց 4. ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների գործունեությանն առնչվող խնդիրներ (ԱՏԳ շահագործողների ռեեստրում ներառվելու ընթացակարգի և այլ հիմնախնդիրների քննարկում):

«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային ասոցիացիայի տարածքային տնօրեն Նիկա Մանուկովայի զեկուցմամբ ներկայացվեց հարցը: Վերջինս ներկաներին տեղեկացրեց, որ ինքը հանդիսանում է Եվրոպայում և ԱՊՀ կազմակերպության ներկայացուցիչը և ցանկանում է կիսվել այդ երկրների փորձով: Մասնավորապես աշխարհում կա մոտ 3000 ազատ տնտեսական գոտիներ և ավելի քան 200 հազար արդյունաբերական գոտիներ՝ 75 գործունեության տեսակներով: Հայաստանում արդեն 10 տարի գործում է «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքը, սակայն իրականում այս ոլորտում հաջողված փորձ չի արձանագրվել: Համաձայն տիկին Մանուկովայի, պատճառները տարբեր են՝ թե էկոհամակարգի ստեղծման, թե վարչարարության ,և թե կառավարման, և թե այլ խնդիրների իմաստով:

Հաշվի առնելով, որ խնդիրները շատ են, առաջարկվում է որպես առաջնային խնդրի լուծում, պարզեցնել ներդրողներին, որպես ազատ տնտեսական գոտիների շահագործողներ գրանցելու ընթացակարգը: Այսպես՝ օրինակ, համաձայն գործող օրենսդրության, ներդրողը պետք է բիզնես պլան և ներդրումային փաթեթները ներկայացնի Էկոնոմիկայի նախարարությունը, որը միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դիտարկվում է և տրվում է

համապատասխան եզրակացություն: Այդ եզրակացության պարագայում նորից շրջանառվում է և ներկայացվում է Արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացությանը (որն, ի դեպ, որպես միջգերատեսչական հանձնաժողովի անդամ տվել էր իր եզրակացությունը), որից հետո ներկայացվում է Վարչապետի աշխատակազմ: Փաստացի շահագործողի թույլտվությունը տրամադրվում է կառավարության որոշմամբ, ինչը վարչարարության տեսանկյունից ծախսատար գործընթաց է և չի համապատասխանում միջազգային լավագույն փորձին և, ըստ այդմ, էլ առաջարկվում է ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվություն տրամադրելու իրավասությունը փոխանցել այդ գոտու կազմակերպչին:

Հարցի առնչությամբ դիտարկումներ ներկայացրեց Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերական քաղաքականության վարչության պետ Արմեն Եգանյանը, ով տեղեկացրեց, որ համաձայն լինելով առաջարկին, անհրաժեշտ է համարում խնդիրը համալիր դիտարկել: Կազմակերպիչները շահագործման իրենց գործառույթները սահմանափակում են վարձավճարով տարածքներ տրամադրելու գործառույթի իրականացմամբ և առանձնակի շահագրգռվածություն չեն ցուցաբերում այդ գոտիների առավել արդյունավետ շահագործման հետ կապված հարցերում, այսինքն՝ առաջնային, հիմնական խնդիրը պրոֆեսիոնալ կազմակերպիչների ինստիտուտի կայացումն է: Պարոնը Եգանյանը տեղեկացրեց, որ Էկոնոմիկայի նախարարությունը ներկայումս աշխատանքներ է իրականացնում ազատ տնտեսական գոտիների զարգացման օրենսդրության փոփոխման ուղղությամբ՝ հայտնելով նախարարության պատրաստակամությունը՝ համագործակցելու նշված բարեփոխումների փաթեթի մշակման աշխատանքներում «Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային ասոցիացիայի հետ՝ տիկին Մանուկովայի կողմից նշված, միջազգային լավագույն փորձի (Հայաստանի համար կիրառելի՝ Մակեդոնիա, Սերբիա և այլն) կիրառմամբ բարեփոխումների գործընթացը կազմակերպելու համար:

ՈՐՈՇՎԵՑ

Հարցի շուրջ քննարկումների արդյունքներով նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը առաջարկեց արձանագրել, որ Էկոնոմիկայի նախարարությունը բարեփոխումների գործընթացում՝ «Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ

առևտրային ասոցիացիայի հետ համագործակցությամբ, կառաջնորդվի միջազգային լավագույն փորձով, ընդ որում բարեփոխումները պետք է իրականացվեն կազմակերպչի ինստիտուտի թափանցիկության և նոր, առավել խստապահանջ (օրինակ՝ որակավորման, լիցենզավորման և այլ պահանջներ) կարգավորումների ներմուծմամբ:

ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նախագահ՝

ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նախագահ՝
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

_____
(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ